Արձանագրություն N 6

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» «հունվարի» 2019թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Կարապետյան

Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որոկովորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- «Իմպլանտմեդ» ՍՊ ընկերության կողմից «Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում» հավելված 2-ը բացակայում է, 1-ին և 2-րդ չափաբաժիններում:
- «Իմպլանտմեդ» ՍՊ ընկերության կողմից «Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելված 3-ում տեխնիկական բնութագրում 2-րդ չափաբաժնում մասնակցի կողմից ներկայացվել է ապրանքի բոլոր նշված չափսերի տատանում ±2%, որը հստակ չի նկարագրում տվյալ ապրանքի պարամետրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց. N3 չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պրոֆտեստ» ՍՊԸ, N4 չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ա.Կոստանյան և ընկերներ» ՍՊԸ, N7 և 16 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Զորաշեն» ՍՊԸը, N8, 13, 14, 15 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Լ.ԱԷԿԱ»ՍՊԸ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին « ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի՝ անգործության ժամկետից հետո N7 և 16 չափաբաժինների մասով գնման պայմանագիր կնքել «Զորաշեն» ՍՊԸ հետ:

2.2 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին « ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետ չսահմանել և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Լ.ԱԷԿԱ» ՀՁ ՍՊԸ հետ կնքել գնման պայմանագիր N8, 13, 14, 15 չափաբաժինների մասով, «ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ հետ՝ N3 չափաբաժնի մասով, «Ա.Կոստանյան և ընկերներ» ՍՊԸ հետ՝ N4 չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Մ.Կարապետյան